«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- **«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)** 8-րդ հոդվածի **3**-րդ մասը ճանաչել ուժը կորցրած։
- Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-11-րդ մասերով.

«5. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են անկանխիկ եղանակով, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի։

6. Ընտանեկան, սոցիալական նպաստ և հրատապ օգնությունը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով, եթե ընտանիքի չափահաս անդամ հանդիսացող դիմողն առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ է, կամ լրացել է նրա 75 տարին։
7. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարելը նպաստի կամ հրատապ օգնության գումարը ընտանիքի չափահաս անդամին վճարելն է։
8. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստն անկանխիկ եղանակով վճարելը՝ ընտանիքի չափահաս անդամ հանդիսացող դիմողի անվամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության հաշվին փոխանցելն է։
9. Հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով վճարելը հրատապ օգնության գումարը ընտանիքի չափահաս անդամ հանդիսացող դիմողի անվամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված միանվագ դրամական վճարների հաշվին փոխանցելն է։
10. Ընտանեկան նպաստը և սոցիալական նպաստն անկանխիկ եղանակով վճարելու դեպքում վճարումը շարունակելու համար անձը, ում անունով բացվել է սույն հոդվածի 8-րդ կետում նշված սոցիալական ապահովության հաշիվը, պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (նպաստն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ,

ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

11. Սույն հոդվածի 10-րդ կետում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց նրա՝ բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով տածաքային կենտրոնի կողմից՝ անձամբ այդ անձի ներկայացրած՝ ընտանեկան նպաստին և սոցիալական նպաստին առնչվող ցանկացած գրավոր դիմումի հիման վրա:»:

- Օրենքի 15-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետյալ խմբագրությամբ.

«2) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում:**».**

2) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3) սույն օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ տածաքային կենտրոնի **կողմից չհաստատվելու)** դեպքում.»:

- Օրենքի 17-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետյալ խմբագրությամբ.

«2) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում:**».**

2. 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

« 3) սույն օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ տածաքային կենտրոնի **կողմից չհաստատվելու)** դեպքում.»:

- Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետյալ խմբագրությամբ.

«2) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում:**».**

- Օրենքի 39-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-14-րդ մասերով՝

«13. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը վճարվում է կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ դիմումի հիման վրա, եթե նպաստը նշանակվել է (նշանակման դիմումը ներկայացվել է)՝

1) քաղաքներում և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը,

2) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը։

14. Սույն հոդվածի 13-րդ մասում նշված ժանկետից հետո ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ և հրատապ օգնություն նշանակելու, վերականգնելու կամ վճարման եղանակը փոխելու կամ վճարող կազմակերպությունը փոխելու դիմում կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթուղթ (կից դիմումով) ներկայացնելու դեպքում նպաստը և հրատապ օգնությունը վճարվում է անկանխիկ եղանակով՝ դիմումում նշված բանկի միջոցով։
15. Մինչև սույն հոդվածի 13-րդ մասում նշված ժամկետները նշանակված ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարվում է մինչև դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 14-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը։ Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա նպաստի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի միջոցով՝

1) քաղաքներում և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հունվարի 1-ից.

4) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ 2024 թվականի հունվարի 1-ից։»։

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից։